ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԺԱՄԿՈՑՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՍԼԱՎԻԿԻ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐՈՇ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ՝ ԱՆՁԻ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

ԺԹ. 00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու **Սուսաննա Միհրանի Փիլոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր **Ասյա Սուրենի Բերբերյան**

հոգեբանական գիտությունների դոկտոր **Հրանտ Միքայելի Ավանեսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ** ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ.-ի հուլիսի 4-ին՝ ժամը 12^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2023 թ.-ի մայիսի 19-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Երեմի Վարդանյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հասարակության զարգացման արդի փուլին բնորոշ են սոցիալական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնույթի բուռն փոփոխությունները: Անձնավորությունը ստիպված է անընդհատ ադապտացվել փոփոխություններին, և նրա հարմարվողականության և անձնային հատկությունների դրսևորումներին նոր պահանջներ են առաջադրվում: Անձնավորության ինքնագիտակցության ձևավորման, ինքնաիրացման, ինքնադրսևորման և կենսագործունեության պայմաններին ադապտացիայի համար հատկապես կարևորվում են անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, որոնք միտված են փոխել իրականության ընկալումը՝ պաշտպանելով ավելորդ տագնապայնությունից:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնահարցը բավականաչափ ուսումնասիրված է, այնուամենայնիվ, դեռևս չկա մեկ ընդհանուր կարծիք՝ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ամբողջ համակարգի մասին, ուսումնասիրված չեն նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորման համար Ես-ի զարգացման զգայուն շրջանները և դրսևորման օրինաչափությունները: Առաջ են քաշվել հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորման գենեզիսի վերաբերյալ տարբեր մոտեցումներ, բայց դեռևս ամբողջությամբ պարզաբանված չեն պաշտպանական մեխանիզմների ձևավորման փուլայնության հարցերը: Կա նաև ենթագիտակցական և գիտակցական մակարդակներում գործող պաշտպանական մեխանիզմների տարանջատման խնդիրը: Հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության մեջ հաճախ է քննարկվում անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կատարած դրական կամ բացասական դերը, սակայն դրա վերաբերյալ նույնպես դեռևս մեկ ընդհանուր կարծիք չկա: Պաշտպանական մեխանիզմների դրական դերին անդրադարձել են Զ. Ֆրոյդը (1894), Ա. Ֆրոյդը (1915), Ա. Նալչաջյանը (1988), Ե.Տ. Սոկոլովան (2007), Ֆ.Վ. Բասսինը (1969), Ն. Մակվիլյամսը (1998), Չ. Տարտը (1997): Նրանց աշխատանքներում հոգեբանական պաշտպանությունը դիտվում է որպես մարդկային գիտակցության նորմալ, առօրյայում գործող ենթագիտակցական մեխանիզմ: Որոշ գիտնականներ էլ հոգեբանական պաշտպանական մեխանիզմները համարում են արձագանքման պասիվ-խուսափող ձևեր (Ռ.Ա Զացեպիցկի (1980), Կ. Ռոջերս (1964), Վ. Ռայխ (1963)): Անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների առանձնահատկությունների և դրսևորումների օրինաչափությունների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ պաշտպանական մեխանիզմները կարող են հանդես գալ որպես ախտորոշման չափորոշիչներ: Հոգեբանական

պաշտպանությունն այսօր դիտարկվում է նաև հոգեկան առողջության տեսանկյունից: Քանի որ անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմները անձնային կառույցի ձևավորման կարևորագույն գործոններից են, այսօր արդիական են դրանց արդյունավետության ու գործունեության մակարդակների գնահատման խնդիրները, որոնց շնորհիվ հնարավոր է տարբեր հոգեբանական/հոգեկան խնդիրներով այցելուների հոգեվիճակի ախտորոշման և հոգեշտկողական աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնել:

Այսպիսով, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխհարաբերությունների դինամիկայի և հասունացման տարբեր փուլերում դրանց դերի հետազոտության արդիականությունը պայմանավորված է ժամանակակից հոգեբանությանն առաջադրված տեսական և գործնական խնդիրներով:

Հետազոտության օբյեկտը հանդիսանում է անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների համահարաբերակցությունը:

Ուսումնասիրության առարկան է հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների համահարաբերակցության դինամիկան 14-15 և 22-25 տարիքային խմբերում:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների հատկությունների համահարաբերակցության առանձնահատկությունները՝ անձի զարգացման տարբեր փուլերում:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ անձնավորության կողմից պաշտպանական մեխանիզմների ընտրությունը պայմանավորված է տարիքային տարբեր փուլերում նրա անձնային կառույցների և անձնային մի շարք բնութագրերի զարգացման մակարդակով:

Հասուն անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների անհատական շարքում հասուն պաշտպանական մեխանիզմներն ավելի շատ են:
Ուսումնասիրության նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ կոնկրետ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել հոգեբանական գիտական գրականության մեջ առկա հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային հասունության վերաբերյալ տեսություններն ու հիմնական մոտեցումները:
2. Բացահայտել դեռահասների պաշտպանական մեխանիզմների համակարգը:
3. Բացահայտել 22-25 տարեկանների պաշտպանական մեխանիզմների համակարգը:

4. Ուսումնասիրել դեռահասների անձնային կառույցների, հատկությունների և պաշտպանական առանձին մեխանիզմների համահարաբերակցության առանձնահատկությունները:
5. Ուսումնասիրել 22-25 տարեկանների անձնային կառույցների, հատկությունների և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների համահարաբերակցային առանձնահատկությունները:
6. Վեր հանել տարիքային երկու փուլերում պաշտպանական մեխանիզմների կիրառման առանձնահատկությունները:

Հետազոտության ընտրակազմը՝ Հետազոտությանը մասնակցել են 94 հետազոտվողներ՝ N 129 դպրոցի 7-8-րդ դասարանի 14-15 տարեկան 47 աշակերտներ և ՀՊՄՀ-ի «Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի» ֆակուլտետի հեռակա 2-րդ կուրսի 22-25 տարեկան 47 ուսանողներ:

Հետազոտության համար **տեսամեթոդական** հիմք են ծառայել Լ. Ֆոն Բերտալանֆիի (1969), Բ. Ֆ. Լոմովի (1984), Բ. Գ. Անանեվի (2001) կողմից մշակված համակարգային մոտեցումը, պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ Զ. Ֆրոյդի հոգեդինամիկ տեսությունը (1894), Բ.Գ. Անանեվի անձի կառուցվածքի տեսությունը (1968), ինքնագիտակցության վերաբերյալ Է. Բեռնսի (1989) և Վ. Ստոլինի (1983) մոտեցումները, հասուն անձնավորության վերաբերյալ Գ. Օլպորտի (1961), Ա. Մասլոուի (1968), Կ. Ռոջերսի (1967) հայեցակարգերը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտությունը կատարվել է թեստավորման մեթոդով՝ ընդգրկելով պաշտպանական մեխանիզմները, անձնային հատկությունները և կառույցները: Համալիր ուսումնասիրության նպատակով օգտագործվել են մի շարք ստանդարտացված մեթոդիկաներ:

1. Ռ. Պլուտչիկի, Գ. Կելլերմանի և Հ.Ռ Կոնտեի «Կյանքի ոճի ինդեքս» (Life Style Index, LSI) հարցարան:
2. Վ.Վ. Ստոլինի և Ս.Ռ. Պանտիլեևի «Ինքնավերաբերմունքի հարցարանը»:
3. Ջ. Ռավենի «Աստիճանաբար բարդացող աղյուսակներ» թեստը՝ ինտելեկտի հետազոտման նպատակով:
4. «Ինքնագնահատում» թեստը:
5. Զ.Դ. Սպիլբերգերի և Յու. Խանինի «Իրավիճակային և անձնային տագնապայնության մակարդակի գնահատման սանդղակը»:
6. Ա. Բելովի «Խառնվածքային տիպի ուսումնասիրության մեթոդիկա»:
7. Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի «Սոցիալ-հոգեբանական ադապտացվածության» մեթոդիկան:
8. Կ. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքագծի նախատրամադրվածության ախտորոշման» մեթոդիկան:
9. Ն.Ն. Օբոզովայի «Կամքի ուժի ինքնագնահատում» թեստը:
10. Վ.Մ. Ռուսալովի «Հուզականության ախտորոշում» մեթոդիկան:

Ստացված տվյալները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության:

Հենվելով տվյալների թույլատրելի տատանման հաշվումների արդյունքների վրա՝ հետազոտության արդյունքների քանակական վերլուծությունը կատարվել է համակարգչային SPSS-15 և Microsoft Office Excel ծրագրերով:

Հետազոտության գիտական նորույթը: Բացահայտվել են.

- պաշտպանական մեխանիզմների և անձնային հատկությունների, կառույցների փոխազդեցության օրինաչափությունները՝ տարիքային տարբեր փուլերում:
- ինքնագիտակցության զարգացման մակարդակի և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների համահարաբերակցության առանձնահատկությունները:
- հասուն պաշտպանական մեխանիզմների ձևավորման հոգեբանական գործոնները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- Հետազոտության արդյունքները կարող են ընդլայնել պաշտպանական մեխանիզմների ձևավորման և դրսևորման օրինաչափությունների վերաբերյալ տեսական պատկերացումները:
- Հասուն պաշտպանական մեխանիզմների փուլային զարգացման մասին ստացված տվյալները կարող են ընդլայնել անձի զարգացման մասին պատկերացումների շրջանակը:
- Պաշտպանական մեխանիզմների, ինքնագիտակցության և անձնային հատկությունների փոխհարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ ստացված տվյալները կարող են լրացնել անձի հասունության վերաբերյալ տեսական պատկերացումները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Գիտափորձարարական ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել «Ընդհանուր հոգեբանություն» և «Անձի հոգեբանություն» առարկաների ուսումնական ծրագրերում, գործնական աշխատանքներում, ինչպես նաև անձնավորության աճի, ինքնաիրացմանն ուղղված վարժանքների ծրագրերում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Տարիքային տարբեր փուլերում առավել ակտիվ գործում են տարբեր հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ:
2. Հոգեբանական պաշտպանությունը նպաստում է անձնային առանձին հատկությունների և կառույցների կայուն դրսևորմանը:
3. Հասուն անձնավորության անձնային առանձին կառույցներ կարող են կատարել հոգեբանական պաշտպանության գործառույթ:

4. Անձնավորության կողմից հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ընտրությունը պայմանավորված է նրա անձնային տարբեր հատկություններով և անձնային կառույցների զարգացման աստիճանով:

Հետազոտության փուլերը.

1-ին փուլում /2007-2013թթ./ կատարվել են անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային հատկությունների, կառույցների, անձի հասունության վերաբերյալ գիտական գրականության վերլուծություն, հետազոտության առարկայի և օբյեկտի ընտրություն, հետազոտության խնդիրների, մեթոդաբանական հիմքերի որոշակիացում: Կատարվել են նախնական գիտափորձեր՝ մեթոդների և մեթոդիկաների ճշգրտման, փորձարարական խմբերի ընտրության նպատակով:

2-րդ փուլում /2016 թ. հունվար - մայիս/ կատարվել են պաշտպանական մեխանիզմների և անձնային հատկությունների, կառույցների հետազոտությունները:

3-րդ փուլում /2016 թ. հունիս - հոկտեմբեր/ կատարվել են հետազոտության տվյալների մշակումը, քանակական և որակական վերլուծությունները, ընդհանրացվել են արդյունքները, շարադրվել է ատենախոսությունը, ձևակերպվել են եզրակացություններն ու գործնական առաջարկները:

Հետազոտության փորձաքննությունը և տվյալների հուսալիությունը: Ուսումնասիրության արդյունքների հավաստիությունն ապահովվել է հոգեբանական հետազոտություններին ներկայացվող պահանջներով, հիմնախնդրի տեսական համալիր վերլուծությամբ, ընտրված մեթոդաբանական սկզբունքներով, ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխան հոգեբանական գիտության և պրակտիկայի մեջ ընդունված մեթոդների և մեթոդիկաների կիրառությամբ, փորձարկվողների բավարար թվաքանակի ընտրությամբ: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվել է տվյալների մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով, ինչպես նաև քանակական և որակական համալիր հոգեբանական վերլուծությամբ:

Հետազոտության արդյունքները պարբերաբար քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի նիստերում, միջազգային գիտաժողովներում և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հավատարմագրված գիտական հանդեսներում: Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հրատարակվել է ինը հոդված:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, մասնագիտական գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը համակարգչային շարվածքով 183 տպագիր էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հիմնախնդրի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական վարկածը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության ընտրակազմը, ընտրված մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստությունն ու փորձաքննությունը, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրը գիտական գրականության մեջ» գլխի 1.1՝ «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության հիմնական մոտեցումները»** ենթագլխում ներկայացված են պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության հիմնական մոտեցումները, գործընթացները և գործառույթները, ելակետային հասկացությունների մեկնաբանությունը, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրը անձի կառուցվածքում: Քննարկվել են նաև հոգեբանական պաշտպանության բաղադրիչներն ու չափանիշները: Կատարված տեսական վերլուծությունից պարզվել է, որ «հոգեբանական պաշտպանություն» հասկացությունը հոգեբանական գրականության մեջ դիտվել է որպես գիտակցության և անգիտակցականի միջև կոնֆլիկտի լուծման միջոց, անձի ձևավորված բնավորություն, մարդկային գիտակցության նորմալ մեխանիզմ, արտաքին և ներքին կոնֆլիկտների լուծման ոչ արդյունավետ և վնասակար միջոց, հույզերի արդյունք:

Ատենախոսության **1.2՝ «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորումը և տեսակները»** ենթագլխում քննարկվել են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորման և դասակարգման մոտեցումները, տարիքային զարգացման տարբեր փուլերում պաշտպանական մեխանիզմների առանձնահատկությունները, դրանց ձևավորման և դրսևորման առանձնահատկությունները՝ ծնող-երեխա փոխհարաբերությունների համատեքստում: Ենթագլխում քննարկվում են նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների տեսակները, դասակարգման և տեսակների վերաբերյալ գիտական մոտեցումներն ու դրանց առանձնահատկությունները:

Ատենախոսության **1.3՝ «Հասուն անձ»** ենթագլխում քննարկված են ինքնագիտակցության և հասուն անձի վերաբերյալ հիմնական մոտեցումները, հասուն անձի առանձնահատկությունների ու դրանց օնտոգենետիկ զարգացման հիմնախնդիրները: Ներկայացված է հասուն անձի վերաբերյալ մեր կողմից առավել ընդունված մեկնաբանությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձի բնութագրերի՝ անձնային կառույցների,**

հատկությունների փորձարարական ուսումնասիրություն» գլխի 2.1 «Հետազոտության կազմակերպումը, մեթոդական հիմքերը, մեթոդներն ու դրանց ընտրության հիմնավորումը» ենթագլխում ներկայացված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդաբանական հիմքերը, փուլերն ու ներգրավված ընտրակազմի հիմնավորումը: Մանրամասն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված քանակական և որակական վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, ինչպես նաև թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաների էությունն ու անցկացման ընթացակարգերը:

Ատենախոսական աշխատանքի 2.2՝ **«Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձի բնութագրերի՝ անձնային կառույցների, հատկությունների հետազոտության արդյունքների ուսումնասիրություն»** խորագրով գլխում առանձին ներկայացված են դեռահասների (14-15 տարեկաններ) և 22-25 տարեկան հետազոտվողների տարիքային խմբերում հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների համահարաբերակցային ցուցանիշների վերլուծությունները:

2.2.1. «14-15 տարեկան դեռահասների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների, հատկությունների համահարաբերակցային ցուցանիշների ուսումնասիրությունը» ենթագլխում վերլուծվել են դեռահասների կողմից կիրառվող տարբեր հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառման հաճախականությունը, անձնային կառույցների և տարբեր բնութագրիչների զարգացման մակարդակները: Վերլուծվել են նաև 14-15 տարեկանների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների, հատկությունների միջև համահարաբերակցային կապերը:



Գծապատկեր 1. 14-15 տարեկանների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների միջև համահարաբերակցային կապերը.



Գծապատկեր 2. 14-15 տարեկանների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և Ես-ի կառույցների միջև համահարաբերակցային կապերը.

Պաշտպանական մեխանիզմների և Ես-ի կառույցների միջև համահարաբերակցային կապերի վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ դեռահասության տարիքում Ես-ի կառույցների պաշտպանությունը, հիմնականում, իրականացվում է տարրական պաշտպանական մեխանիզմների կողմից: Այսպես, դեռահասի ինքնավստահությունը, ինքնաընդունումը, ինքնահարգանքը, ինքնահամակրանքը, ինքնակառավարումը պաշտպանվում են, հիմնականում, մերժում, արտամղում, ռեգրես, պրոյեկցիա, երբեմն՝ կոմպենսացիա և հակազդեցության կազմավորում պաշտպանական մեխանիզմների կողմից: Ինտելեկտուալիզացիան համահարաբերակցային կապի մեջ է միայն Ես-ի կառույցներից սեփական Ես-ին կողմ լինելու հետ: Այսպիսով, դեռահասի անձնային կառույցները դեռևս բավականին զարգացած չեն, այդ պատճառով էլ նա կարողանում է հոգեբանական պաշտպանությունն իրականացնել, հիմանականում, տարրական մեխանիզմների միջոցով: Սակայն դեռահասի կողմից արդեն կիրառվում են հասուն պաշտպանական մեխանիզմներ, թեև ոչ այնքան հաճախ, ինչպես տարրական պաշտպանական մեխանիզմները:

Ատենախոսության **2.2.2. «22-25 տարեկան հետազոտվողների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների, հատկությունների համահարաբերակցային ցուցանիշների ուսումնասիրությունը»** ենթագլխում քննարկվում են 22-25 տարեկանների կողմից տարբեր հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառման հաճախականությունը, անձնային կառույցների և տարբեր բնութագրիչների զարգացման մակարդակները, ինչպես նաև 22-25 տարեկան հետազոտվողների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների, հատկությունների միջև համահարաբերակցային կապերը:



Գծապատկեր 3. 22-25 տարեկանների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների միջև համահարաբերակցային կապերը.

Մեր հետազոտության տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ 22-25 տարեկան երիտասարդներն ավելի հաճախ կիրառում են ավելի հասուն պաշտպանական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ ինտելեկտուալիզացիան, կոմպենսացիան: Մերժում, ռեգրես, փոխարինում պաշտպանական մեխանիզմների կիրառման հաճախականությունը նվազում է: 22-25 տարեկանների խմբում, երբ հետազոտվողների անձնային կառույցները՝ ինտելեկտը, կամքը, զարգացած են, հույզերն ավելի կառավարելի են: Կոմպենսացիա և հակազդեցության կազմավորում պաշտպանական մեխանիզմների դրսևորումը պայմանավորված է

կամքի ուժի զարգացման մակարդակով: Անձի զարգացմանը զուգընթաց հարմարման խնդիրները լուծելու նոր պահանջներ են առաջադրվում, որոնց լուծման համար անհրաժեշտություն է առաջանում կիրառել նոր՝ իմացական հիմքի վրա գործող պաշտպանական մեխանիզմներ: Անձի զարգացման մակարդակով պայմանավորված՝ ինտելեկտը, անձի առանձին հատկությունները, Ես-ի զարգացած կառույցները հոգեբանական պաշտպանական մեխանիզմի դեր են ստանձնում:



Գծապատկեր 4. 22-25 տարեկանների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների միջև համահարաբերակցային կապերը.

Ատենախոսության **2.3. «Երկու տարիքային խմբերի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների, հատկությունների համահարաբերակցային կապերի համեմատական վերլուծություն»** ենթագլխում վերլուծվում են երկու տարիքային խմբերի հոգեբանական պաշտպանական

մեխանիզմների և անձնային կառույցների, հատկությունների միջև բացահայտված համահարբերակցային կապերի առանձնահատկությունները:

Ստացված տվյալների համեմատական վերլուծությամբ պարզ է դառնում, որ դեռահասների մոտ ինտելեկտի հետ համահարաբերակցային դրական կապով կապված է միայն ինտելեկտուալիզացիա պաշտպանական մեխանիզմը ($p \leq 0.05$, երբ $r=0.341$), իսկ երիտասարդների մոտ ինտելեկտի հետ կապեր ունեն ռեգրեսը ($p \leq 0.05$, երբ $r=-0.316$), կոմպենսացիան ($p \leq 0.05$, երբ $r=0.299$) և ինտելեկտուալիզացիան ($p \leq 0.01$, երբ $r=0.362$): Ընդ որում, ռեգրեսի հետ բացասական միջին ամրության կապ է արտահայտվել, ինչը վկայում է, որ ինտելեկտի զարգացման որոշակի մակարդակում արդեն, ռեգրես պաշտպանական մեխանիզմը չի կիրառվում, և հակառակը, քանի որ երիտասարդները խնդիրների լուծման բավարար միջոցների են տիրապետում և կարող են ավելի հասուն պաշտպանական մեխանիզմներ կիրառելով կոգնիտիվ մակարդակում լուծել առաջացած խնդիրներն ու ներքին լարվածությունը հաղթահարել: Երիտասարդների մոտ կոմպենսացիայի և ինտելեկտի միջև դրական համահարաբերակցային կապը նույնպես կապված է երիտասարդության տարիքում ինտելեկտուալ գործընթացների զարգացման մակարդակի և խնդիրների լուծման փոխհատուցող տարբերակների ընտրության հնարավորության հետ:

Կամքի ուժի և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների համահարաբերակցության վերլուծության արդյունքները վկայում են այն մասին, որ տարիքային խմբերում էլ կամքի ուժը և հասուն պաշտպանական մեխանիզմները ամուր կապերի մեջ են: Ամենայն հավանականությամբ, ստացված կապերը պայմանավորված են տվյալ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների առանձնահատկություններով. նրանց գործառույթը հույզերի կառավարումը, զսպումն ու նոր հակազդեցության ձևավորումն է: Դեռահասների մոտ, ի տարբերություն երիտասարդների, բացի կոմպենսացիայից ($p \leq 0.05$, երբ $r=0.311$) և հակազդեցության ձևավորումից ($p \leq 0.05$, երբ $r=0.309$) դրական կապ է բացահայտվել նաև ինտելեկտուալիզացիայի և կամքի միջև ($p \leq 0.05$, երբ $r=0.316$):

Երկու խմբերի հուզականության և պաշտպանական մեխանիզմների համահարաբերակցային կապերում նույնպես էական տարբերություններ կան: Դեռահասների պաշտպանական մեխանիզմներից կոմպենսացիան ($p \leq 0.05$, երբ $r=0.297$), պրոյեկցիան ($p \leq 0.05$, երբ $r=0.301$), փոխարինումը ($p \leq 0.05$, երբ $r=0.316$), ինտելեկտուալիզացիան ($p \leq 0.05$, երբ $r=0.297$) և հակազդեցության ձևավորումը ($p \leq 0.05$, երբ $r=0.307$) միջին ամրության կապերով կապված են ընդհանուր հուզականության հետ, իսկ երիտասարդների մոտ պաշտպանական մեխանիզմներից միայն հակազդեցության ձևավորումն է կապված ընդհանուր հուզականության հետ ($p \leq 0.05$, երբ $r=0.322$): Երիտասարդների մոտ տարրական պաշտպանական մեխանիզմներից ռեգրեսի ($p \leq 0.05$, երբ $r=0.307$) և արտամղման

(p≤0.05, երբ r=0.300) կապեր են արտահայտվում հուզականության կոնկրետ ոլորտների՝ փսիխոմոտոր և կոմունիկատիվ հուզականության հետ: Այս երկու տարիքային խմբերում միայն ինտելեկտուալիզացիան է, որ կայուն կապ ունի ինտելեկտուալ հուզականության հետ, սակայն կապը երիտասարդների մոտ ավելի ամուր է (p≤0.01, երբ r=0.386): Կարելի է ենթադրել, որ անձնային կառույցների զարգացմանը զուգահեռ անձնավորության հուզական ոլորտն ավելի կայունանում է, և առանձին պաշտպանական մեխանիզմների դրսևորումները պայմանավորված են տվյալ պաշտպանական մեխանիզմի առանձնահատկությամբ և հուզական առանձին ոլորտների հետ նրա կապով:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և խառնվածքի միջև կապերը դեռահասների մոտ հիմնականում ամուր են, իսկ երիտասարդների մոտ միջին ամրության կապեր են արտահայտված:

Երկու տարիքային խմբերի մոտ ուսումնասիրվել են նաև անձնային և իրադրային տագնապայնության ու պաշտպանական մեխանիզմների միջև կապերը: Երկու խմբերի մոտ էլ անձնային տագնապայնության և պաշտպանական մեխանիզմների միջև կապեր չեն արձանագրվել: Իսկ իրադրային տագնապայնության հետ կապված երկու տարիքային խմբերում էլ էական տարբերություններ են արձանագրվել: Դեռահասների մոտ ստացվել են բացառապես տարրական պաշտպանական մեխանիզմների և իրադրային տագնապայնության միջև կապեր, իսկ երիտասարդների մոտ՝ հիմնականում ավելի հասուն պաշտպանական մեխանիզմների հետ: Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ դեռահասների կողմից իրադրային տագնապայնության հաղթահարման համար, հիմնականում, կիրառվում են տարրական պաշտպանական մեխանիզմներ, իսկ երիտասարդների կողմից՝ ավելի հասունները:

Կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ոճերի և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների միջև կապերից պարզ է դառնում, որ դեռահասների կողմից կոնֆլիկտի կարգավորման միջոցների ընտրության հարցում հոգեբանական պաշտպանական մեխանիզմները մեծ դեր ունեն, քանի որ հասուն վարքին բնորոշ համագործակցության և փոխզիջման հետ կապված են հասուն պաշտպանական մեխանիզմները, իսկ մրցակցության և խուսափման հետ հիմնականում դեռահասների մոտ արձանագրվել են տարրական պաշտպանական մեխանիզմների հետ կապեր: Իսկ երիտասարդների մոտ ավելի քիչ կապեր են բացահայտվել, սակայն դրանք պայմանավորված են առանձին պաշտպանական մեխանիզմների տեսակների և դրանց վարքային դրսևորումների առանձնահատկություններով: Օրինակ երիտասարդների մոտ ռեգրես (p≤0.01, երբ r=0.409) և արտամղում (p≤0.05, երբ r=0.313) պաշտպանական մեխանիզմները կապված են խուսափում վարքային ոճի հետ: Նման կապը տրամաբանական է՝ հաշվի առնելով արտամղման և ռեգրեսի պասիվ պաշտպանական մեխանիզմներ

լինելը: Իսկ համագործակցությունը երիտասարդների մոտ ինտելեկտուալիզացիայի հետ է կապված (p≤0.05, երբ r=0.305):

Դեռահասների մոտ ինքնագնահատականի և պաշտպանական մեխանիզմների միջև համահարաբերակցային կապեր չեն արձանագրվել, իսկ երիտասարդների մոտ կոմպենսացիայի (p≤0.05, երբ r=0.304), պրոյեկցիայի (p≤0.05, երբ r=0.322), փոխարինման (p≤0.05, երբ r=0.302) և ինտելեկտուալիզացիայի (p≤0.05, երբ r=0.317) հետ միջին ամրության կապեր են բացահայտվել: Այսինքն՝ ինքնագնահատականի պաշտպանության համար երիտասարդների կողմից կիրառվում են և՛ հասուն, և՛ տարրական հոգեբանական պաշտպանական մեխանիզմները:

Ինքնագիտակցության բաղադրիչների և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների միջև արտահայտված կապերը վկայում են, որ դեռահասների մոտ ռեգրեսն ավելի շատ կապեր ունի ինքնագիտակցության բաղադրիչների հետ: Այն կապված է սեփական Ես-ին կողմ լինելու (p≤0.05, երբ r=0.312), ինքնահարգանքի (p≤0.05, երբ r=0.321), ինքնահամակրանքի (p≤0.05, երբ r=0.314), ուրիշներից շփման սպասման (p≤0.05, երբ r=0.297) և ինքնակառավարման (p≤0.05, երբ r=0.332) հետ: Դա փաստում է այն մասին, որ այս բաղադրիչների պաշտպանության գործում դեռահասության տարիքում ռեգրեսը մեծ նշանակություն ունի: Ըստ կապերի նշանակալիության՝ ռեգրեսին հաջորդում են մերժումն ու պրոյեկցիան: Ընդ որում, մերժումը դրական կապերով կապված է սեփական Ես-ին կողմ լինելու (p≤0.05, երբ r=0.313), ինքնավստահության (p≤0.05, երբ r=0.308) և ինքնաընդունման հետ (p≤0.05, երբ r=0.299), իսկ պրոյեկցիան ինքնահամակրանքի (p≤0.05, երբ r=0.307), Ես-ին կողմ լինելու (p≤0.05, երբ r=0.305) և ուրիշներից դրական վերաբերմունքի սպասման (p≤0.05, երբ r=0.322) հետ: Դեռահասների մոտ կոմպենսացիան նույնպես մասնակցում է ինքնագիտակցության բաղադրիչների պաշտպանությանը և դրական կապերով կապված է ինքնահարգանքի (p≤0.05, երբ r=0.336), ինքնահամակրանքի (p≤0.05, երբ r=0.324), ուրիշներից դրական վերաբերմունքի սպասման (p≤0.05, երբ r=0.328) և ինքնակառավարման (p≤0.05, երբ r=0.332) հետ: Երիտասարդների մոտ կապերն էականորեն տարբերվում են: Սեփական Ես-ին կողմ լինելը բացասական ամուր կապով է կապված փոխարինման հետ (p≤0.01, երբ r=-0.404): Ինքնահարգանքի հետ բացասական կապով են կապված ռեգրեսն (p≤0.05, երբ r=-0.292) ու պրոյեկցիան (p≤0.05, երբ r=-0.335), դրական կապով՝ ինտելեկտուալիզացիան (p≤0.05, երբ r=0.327): Ինքնահամակրանքը նույնպես կապված է ավելի հասուն ինտելեկտուալիզացիայի հետ (p≤0.05, երբ r=0.305): Ինքնակառավարումը բացասական կապով է կապված մերժման հետ (p≤0.05, երբ r=-0.327):

Այսպիսով, ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ինքնագիտակցության բաղադրիչների պաշտպանությանը դեռահասության

տարիքում, հիմնականում, մասնակցում են տարրական մեխանիզմները, իսկ երիտասարդության տարիքում՝ ավելի հասունները, ընդ որում, որքան ավելի զարգացած է ինքնագիտակցությունը, այնքան տարրական պաշտպանական մեխանիզմներն ավելի քիչ են կիրառվում:

Ուսումնասիրվել են նաև երկու տարիքային խմբերի մոտ ադապտացիայի և պաշտպանական մեխանիզմների միջև դրսևորված կապերը: Արդյունքները ցույց են տալիս, որ դեռահասության տարիքում հարմարվածության տարբեր ցուցանիշների հետ, հիմնականում, կապված են տարրական պաշտպանական մեխանիզմները՝ մերժումը, արտամղումը, փոխարինումն ու հակազդեցության ձևավորումը: Ընդ որում, մարդկանց ընդունման հետ բացասական կապով են կապված արտամղումն ($p \leq 0.05$, երբ $r=-0.338$) ու փոխարինումը ($p \leq 0.05$, երբ $r=-0.299$): Քանի որ մարդկանց ընդունումը համարվում է հասուն անձի բնութագրիչներից մեկը, կարելի է ենթադրել, որ արտամղման և փոխարինման բացասական կապը փաստում են դեռահասների՝ հոգեբանորեն ոչ հասուն լինելը: Երիտասարդների մոտ, ի տարբերություն դեռահասների, դրական կապեր են արձանագրվել ավելի հասուն պաշտպանական մեխանիզմների հետ (կոմպենսացիա, ինտելեկտուալիզացիա): Սակայն կան նաև տարրական պաշտպանական մեխանիզմների հետ կապեր: Մասնավորապես՝ մերժումը կապված է հարմարվածության ($p \leq 0.05$, երբ $r=0.320$) և խնդիրների լուծումից խուսափման ($p \leq 0.01$, երբ $r=0.367$) հետ, իսկ պրոյեկցիան՝ գերակայության ձգտման հետ ($p \leq 0.05$, երբ $r=0.347$): Ռեգրեսը բացասական կապով է կապված իր Ես-ի նկատմամբ համակրանքի հետ ($p \leq 0.05$, երբ $r=-0.297$):

Ընդհանրացնելով ստացված տվյալները, պարզ է դառնում, որ ընդհանուր առմամբ դեռահասների անձնային բնութագրերի և հոգեբանական տարրական պաշտպանական մեխանիզմների միջև ավելի շատ են համահարաբերակցային կապերը: Ըստ այդմ, դեռահասության տարիքում անձնային կառույցների և հատկությունների պաշտպանությանը ավելի շատ են մասնակցում տարրական պաշտպանական մեխանիզմները: Իսկ երիտասարդների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային հատկությունների, կառույցների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ դրանց պաշտպանությանը ավելի շատ մասնակցում են ավելի հասուն պաշտպանական մեխանիզմները:

Այսպիսով, հույզերի կայունացման, ինտելեկտի, կամային որակների և ինքնագիտակցության զարգացմանը զուգընթաց՝ անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների համակարգը սկսում է հասուն պաշտպանական մեխանիզմներ ավելի շատ կիրառել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հոգեբանական գիտական գրականության մեջ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդրի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ այն ուսումնասիրված է որպես զարգացող համակարգ:

2. ա) 14-15 տարեկանների մոտ առավել կիրառական են տարրական պաշտպանական մեխանիզմները (պրոյեկցիա, փոխարինում): Դա պայմանավորված է ինտելեկտուալ զարգացման մակարդակով և հուզական ոլորտի անկայունությամբ:

բ) 14-15 տարեկանների ինքնահարգանքի, ինքնահամակրանքի, ինքնավստահության, ինքնաընդունման պաշտպանության համար հիմնականում կիրառվում են տարրական պաշտպանական մեխանիզմներ՝ ռեգրես, արտամղում, մերժում, փոխարինում:

3. ա) 22-25 տարեկանների մոտ ինտելեկտի զարգացման միջին և բարձր մակարդակներում ռեգրես պաշտպանական մեխանիզմը չի կիրառվում կամ շատ քիչ է կիրառվում:

բ) 22-25 տարեկանների հույզերի հարաբերական կայունացման պայմաններում արտամղումը հետաճ է ապրում:

գ) 22-25 տարեկանների անձնային որոշ բնութագրերի՝ ինքնահասկացման, ինքնահարգանքի, ինքնահամակրանքի պաշտպանությունն իրականացվում է հասուն պաշտպանական մեխանիզմների՝ կոմպենսացիայի և ինտելեկտուալիզացիայի շնորհիվ, իսկ ինքնավստահության, ինքնահարգանքի, և ինքնակառավարման զարգացմանը զուգընթաց ռեգրես, փոխարինում, մերժում և պրոյեկցիա տարրական պաշտպանական մեխանիզմները գրեթե չեն օգտագործվում:

4. Հասուն պաշտպանական մեխանիզմների (ինտելեկտուալիզացիա, հակազդեցության ձևավորում, կոմպենսացիա) զարգացումը պայմանավորված է անձնային կառույցների՝ ինտելեկտի և կամքի զարգացման մակարդակով:

5. Գիտակցված պաշտպանական մեխանիզմները հասուն անձի ցուցանիշներից մեկն են:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Ղազարյան Ա. Ժամկոցյան Ռ., Բնավորության շեշտվածության և պաշտպանական մեխանիզմների փոխհարաբերության առանձնահատկությունները, Գիտական հոդվածներ, մանկավարժություն և մեթոդիկա: Վանաձոր, “ՍԻՄ” տպագրատուն, 2011թ., էջ 98-107:

2. Ժամկոցյան Ռ.Ս. Պաշտպանական մեխանիզմների ձևավորումը անձնավորության անհատական զարգացման ընթացքում, Հոգեբանությունը և կյանքը, N3-4, Զանգակ – 97, 2011թ., էջ 71-75:

3. Ժամկոցյան Ռ.Ս. Անձնավորության պաշտպանական մեխանիզմների և խառնվածքային տիպերի առանձնահատկությունների փոխպայմանավորվածությունը, Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, Միջազգային գիտաժողով, Երևան, Հայաստան, հոկտեմբեր 28-30, 2011թ., էջ 78-80:

4. Ժամկոցյան Ռ.Ս. Դեռահասների վարքային ստերեոտիպերն ու հոգեբանական պաշտպանական մեխանիզմները , Միջազգային գիտա-գործնական համաժողով “Հասարակություն, ընտանիք, դեռահաս՝ արդիական խնդիրներ Հայաստանում և Սփյուռքում”, 2012թ., ապրիլի 13-14-ը Երևան, էջ 77-81:

5. Ժամկոցյան Ռ.Ս. Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառելիությունը տարբեր տարիքային խմբերում, “Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները” IV միջազգային գիտաժողով, Երևան, Հայաստան, հոկտեմբեր 25-27, 2013թ., էջ 78-80:

6. Ժամկոցյան Ռ.Ս. Անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների փոխպայմանավորվածությունը դեռահասության տարիքում, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, 2017թ, էջ 114-120:

7. Ժամկոցյան Ռ.Ս. Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների փոխհարաբերությունները երիտասարդների մոտ, 2/2021, Ստեփանակերտ, Արցախ, էջ 270-277:

8. Փիլոսյան Ս., Ժամկոցյան Ռ. Դեռահասների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային բնութագրերի համահարաբերակցության առանձնահատկությունները, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2/2021, Ստեփանակերտ, Արցախ, էջ 278-285:

9. Жамкоцян Р., Взаимосвязь механизмов психологической защиты и реактивной тревожности в разных возрастных группах, ВЕСТНИК МЕДИЦИНСКОГО ИНСТИТУТА ИМ. МЕГРАБЯНА // Научно-методический журнал, No 12 / Глав. ред. Пароникян Р.Г.; сост.: Акопян А.С. – Ереван: Мекнарк, 2022. – С. 206-211.

ЖАМКОЦЯН РУЗАННА СЛАВИКОВНА

ДИНАМИКА ВЗАИМООТНОШЕНИЙ ПСИХОЛОГИЧЕСКИХ ЗАЩИТНЫХ МЕХАНИЗМОВ И ОТДЕЛЬНЫХ ЛИЧНОСТНЫХ ХАРАКТЕРИСТИК В РАЗНЫХ ЭТАПАХ ЗРЕЛОСТИ

Автореферат диссертации на соискние ученой степени кандидта психологических наук по специальности 19.00.01- «Общая психология, Теория и история психологии, Психология личности».

Защита диссертации состоится 4-ого июля 2023 года в 12^{00} часов на заседании специализированного совета по психологии 064 ВАК РА по присуждению ученых степеней при армянском государственном педагогическом универстете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы: Современный этап развития общества характеризуется стремительными изменениями социального, общественного, политического, экономического, культурного и иного характера. Личность должна постоянно приспосабливаться к изменениям, а к ее адаптивности и проявлениям личностных качеств предъявляются новые требования. Для формирования самосознания личности, самореализации, самовыражения и адаптации к условиям жизни особенно важны психологические защитные механизмы личности, которые направлены на изменение восприятия действительности и защиту от чрезмерной тревожности. Вопрос о механизмах психологической защиты достаточно изучен, но еще недостаточно изучены этапы развития Эго для их формирования и закономерности проявления механизмов психологической защиты. Системных исследований по проблеме психологической защиты нет, до сих пор нет общего мнения о всей системе механизмов психологической защиты. Выдвигались различные подходы к генезису формирования механизмов психологической защиты, однако до конца не выяснены вопросы этапности формирования защитных механизмов. Актуальность изучения особенностей и закономерностей психологических защитных механизмов личности обусловлена еще и тем, что защитные механизмы могут выступать в качестве диагностических критериев. Психологическая защита сегодня также рассматривается с точки зрения психического здоровья. Поскольку механизмы психологической защиты человека являются одним из важнейших факторов формирования личностной структуры, актуальными на сегодняшний день являются проблемы оценки их эффективности и уровня активности, благодаря чему можно проводить диагностику психического состояния и психическую реабилитацию посетителей с различными психологическими/психическими проблемами. Актуальность нашего исследования определяется теоретическими и практическими проблемами, которые ставятся перед современной психологией.

Объектом исследования является взаимосвязь психологических защитных механизмов личности и личностных структур.

Предметом исследования является динамика взаимосвязи механизмов психологической защиты и личностных структур в возрастных группах 14-15 и 22-25 лет.

Цель исследования - выявить особенности взаимосвязи механизмов психологической защиты и свойств личностных структур на разных этапах развития личности.

Гипотеза исследования. Предполагается, что выбор защитных механизмов личности в разных возрастных этапах определяется уровнем развития его личностных структур и рядом личностных особенностей.

В индивидуальном ряду психологических защит зрелой личности имеются более зрелые защитные механизмы.

В целях исследования были выдвинуты следующие задачи.

1. Изучить теории и основные подходы психологических защитных механизмов и личностной зрелости в психологической научной литературе.
2. Выявить систему защитных механизмов подростков.
3. Выявить систему защитных механизмов 22-25-летних.
4. Изучить особенности соотношения личностных структур, свойств и отдельных защитных механизмов подростков.
5. Выявить особенности соотношения личностных структур, свойств и отдельных защитных механизмов 22-25-летних.
6. Выявить особенности проявления защитных механизмов на двух возрастных этапах.

Научная новизна исследования.

1. Выявлены закономерности взаимодействия защитных механизмов и личностных структур и качеств в разных возрастных этапах.
2. Выявлена взаимосвязь между уровнем развития самосознания и психологическими защитными механизмами.
3. Выявлены психологические факторы формирования зрелых защитных механизмов.

Теоретическая и практическая значимость исследования. Результаты исследования могут расширить теоретические представления о закономерностях формирования и проявления защитных механизмов. Полученные данные о поэтапном развитии зрелых защитных механизмов могут расширить рамки понимания развития личности. Полученные данные о специфике взаимосвязи защитных механизмов, самосознания и свойств личности могут дополнить теоретические представления о зрелости личности. Результаты и выводы данной научно-исследовательской работы могут быть применены в рамках таких дисциплин и учебных программ, как “Общая психология”, “Психология личности” и “Возрастная психология”, а также в программах тренингов, направленных на личностный рост и самореализацию.

Экспертиза исследования и надежность данных. Надежность и точность полученных данных обеспечена за счет выбранных методических основ, объективностью и равноценностью использованных методов, количеством тестируемых, количественным и качественным анализом данных. Результаты исследования регулярно обсуждались на заседаниях кафедры общей психологии Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, а также в научных журналах, аккредитованных ВАК РА.

Структура работы. Диссертация состоит из введения, двух глав, выводов, списка литературы и приложений. Общий объем работы составляет 183 страниц без приложений.

По теме диссертации опубликовано 9 статей.

ZHAMKOTSYAN RUZANNA SLAVIK

DYNAMICS OF THE RELATIONSHIPS OF PSYCHOLOGICAL DEFENSE MECHANISMS AND SOME PERSONAL CHARACTERISTICS IN DIFFERENT STAGES OF MATURITY

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in specialty 19.00.01 - General Psychology, Theory and History of Psychology, Psychology of Personality.

The defense of this thesis will take place on July 4, 2023, at 12^{00} PM, at the session of Degree Awarding commission 064 specializing in Psychology of the Higher Attestation Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Address: Tigran Mets street 17, Yerevan, RA.

SUMMARY

The relevance of the topic. The current stage of the development of society is described with the variety of changes. The personality must constantly adapt to changes, and new requirements are imposed on its adaptability and manifestations of personal qualities. To adapt to these changes and form a person's self-consciousness, self-realization and self-expression, psychological defense mechanisms are especially important, which are aimed to chang the perception of reality and protecting against excessive anxiety. The question of the mechanisms of psychological defense has been sufficiently studied, but the stage of development of the Ego for their formation and the patterns of manifestation of the mechanisms of psychological defense have not yet been sufficiently studied. There are no systemic studies on the problem of psychological defense, there is still no consensus on the entire system of psychological defense mechanisms. Various approaches to the genesis of the formation of psychological defense mechanisms have been put forward, but the questions of the stages of the formation of defense mechanisms have not been fully clarified. The relevance of studying the features and patterns of psychological defense mechanisms of a person is also due to the fact that defense mechanisms can act as diagnostic criteria. As the mechanisms of psychological defense of a person are one of the most important factors in the formation of a personality structure, the problems of assessing their effectiveness and level of activity are relevant today, which makes it possible to diagnose the mental state and mental rehabilitation of patients with various psychological / mental problems. The relevance of our research is determined by the theoretical and practical problems of modern psychology.

The object of the research is the relationship between the psychological defense mechanisms of the persone and personality structures.

The subject of the study is the dynamics of the relationship between psychological defense mechanisms and personality structures in the age groups of 14-15 and 22-25 years.

The aim of the study is to reveal the features of the relationship between the mechanisms of psychological defense and the properties of personality structures at different stages of personality development.

The hypothesis of the research: It is supposed that the choice of defense mechanisms by a person at different age stages is determined by the level of development of his personal structures and a number of personal characteristics.

There are more mature defense mechanisms ип the personal repertoire of psychological defenses of a mature personality

For the realization of the aim of research the following ***issues*** have been raised:

1. To study the theories and main approaches of psychological defense mechanisms and personal maturity in the psychological scientific literature.

2. To reveal the system of defense mechanisms of teenagers.

3. To reveal the system of defense mechanisms of 22-25-year-olds.

4. To study the features of the correlation of personality structures, personality properties and defense mechanisms of adolescents.

5. To find out the features of the correlation of personality structures, personality properties and defense mechanisms of 22-25-year-olds.

6. To find out the features of the manifestation of protective mechanisms at two age stages.

Scientific novelty of the research.

1. Regularities of interaction of defense mechanisms and personal qualities, structures at different age stages are revealed.

2. The relationship between the level of development of self-consciousness and psychological defense mechanisms has been revealed.

3. Psychological factors of formation of mature psychological defense mechanisms are revealed.

Theoretical and practical significance of the research.

The results of the study can expand the theoretical understanding of the patterns of formation and manifestation of psychological defense mechanisms and can expand the framework for understanding personality development. The data obtained on the specifics of the relationship between defense mechanisms, self-awareness, and personality traits can complete the theoretical understanding of personality maturity. The results and conclusions of the scientific-experimental research can be used in the plans and educational materials of the subjects “General Psychology”, “Personality Psychology” and “Developmental Psychology”, as well as in training programs aimed at personal growth and self-realization

The expertise of the research and the data availability. The trustworthiness and reliability of the received results are assured by chosen methodological grounds, objectivity and equivalence of the used methods, number of experimented people, quantitative and qualitative analysis of data. The results of the research were periodically discussed in the sessions of Chair of Psychology, ASPU after Kh. Abovyan, as well as in scientific journals accredited by the RA SCC (Supreme Certifying Committee).

The structure of the thesis. The thesis consists of the introduction, two chapters, conclusions, the relevant professional literature list and appendixes. The total volume of the thesis is 183 pages.

9 articles have been published on the topic of the thesis.